Հավելված N 8

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2020 թվականի տարեկան ծրագրի և միջոցառումների ցանկի նախագծերին հավանություն տալու մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի համաձայն ՀՀ կառավարության 2019թ. սեպտեմբերի 30-ի N1292-Լ արձանագրային որոշման իրականացման վերաբերյալ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման չափը և աղբյուրը	2020 թվականի ընթացքում իրականացված աշխատանքներ
1.	**Օրենսդրության համապատասխանեցում ՄԱԿ-ի 2006թ.-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի սկզբունքներին**				
1.1.	ՄԱԿ-ի 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացմանն ուղղված աշխատանքների իրականացում	Արտաքին գործերի նախարարություն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	*Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանության նոր հնարավորությունների ամրագրում՝ «հաշմանդամություն ունեցող անձանց՝ Կոնվենցիայով սահմանված իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ հաղորդումների՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտե ներկայացնելու և կոմիտեի կողմից դրանք քննության առնելու իրավունքի նախատեսման միջոցով:* Մեկնարկել են աշխատանքներ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը վավերացնելու ուղղությամբ: ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 11-ի 938–Ա որոշմամբ

					հավանություն է տրվել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծին և ներկայումս իրականացվում են ներպետական ընթացակարգեր՝ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացումը նոր հնարավորություն և հարթակ կստեղծի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների խախտումների մասին բարձրաձայնելու համար և կնպաստի Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանը:
1.2.	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	*Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց համար հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ապահովման իրավական պահանջների սահմանում, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում նրանց իրավունքների ապահովում՝ բացառելով հաշմանդամության հիմքով խտրականությունը:* ՄԱԿ-ի 2006 թվականի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու նպատակով, հաշվի առնելով նաև կոնվենցիայի կատարման մասին ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թ. մայիսի 8-ի CRPD/C/ARM/CO/1 եզրափակիչ դիտարկումները՝

					նոր խմբագրությամբ մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի նախագիծը՝ ամրագրելով մարդու իրավունքների վրա հիմնված սկզբունքներ: Օրենքի նախագծով պետությունը երաշխավորություն է ստանձնում հաշմանդամություն ունեցող անձանց՝ այլ անձանց հետ համահավասար անկախ կյանքի և համայնքում ներառվելու համար անհրաժեշտ պայմաններ և հավասար հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ: Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի և հավասար պայմաններ ապահովելու նպատակով՝ նախագծով սահմանվել են դրույթներ հաշմանդամության հիմքով խտրականությունը արգելելու, ֆիզիկական միջավայրի, տեղեկատվության և հաղորդակցման մատչելիությունն ապահովելու վերաբերյալ: Օրենքի նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է շահագրգիռ գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների միջև: Ստացված առաջարկները քննարկվել են, արդյունքում լրամշակված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը փաթեթով ներկայացվել են վարչապետի աշխատակազմ:

1.3.	«Ֆունկցոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	*Հաշմանդամություն ունեցող անձի կարիքների գնահատման նոր մոդելի իրավական հիմքի առկայություն* Նոր մոդելի ներդրման իրավական հենքը ապահովելու նպատակով մշակվել և և 13.11.2020 ԶԲ/ՔՀ-3-2/61791-2020 գրությունով վարչապետի աշխատակազմ է ներկայացվելլ «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքի նախագիծը: Համաձայն նախագծի նախատեսվում է բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների փոխարեն ստեղծել ֆունկցիոնալության գնահատման կենտրոններ, որոնք կգործեն ինտեգրված սոցիալական ծառայությունների կազմում: Մշտապես գործող բժշկասոցիալական փորձաքննության հանձաժողովների փոխարեն յուրաքանչյուր անձի ֆունկցիոնալության գնահատման նպատակով մասնագետների ռեեստրից պատահական ընտրությամբ կձևավորվի բազմամասնագիտկան հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում լինելու են բժիշկներ, հոգեբաններ, էրգոթերապիստներ և այլն: Նախագծով նախատեսվում է հաշմանդամության խմբերի փոխարեն (1-ին, 2-րդ, 3-րդ խումբ և հաշմանդամ երեխա), սահմանել անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը՝ թեթև, միջին, ծանր, խորը:
1.4	«Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների փոխակերպման 2020-2024 թթ.	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	*Այլընտրանքային ծառայությունների ընդլայնում* Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի իրավունքը ապահովելու, իրավունքահեն այլընտրանքային ծառայություններ մատուցելու, հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը խնամքի շուրջօրյա մեծ հաստատություններ

	միջոցառումների ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ				կանխարգելելու նպատակով մշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների փոխակերպման 2020-2024 թթ. միջոցառումների ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ նախագիծ): Նախագծով նախատեսվող ծառայությունների փոխակերպման գործընթացը ենթադրում է ապաինստիտուցիոնալացման գործընթաց՝ զուգընթաց ստեղծելով կամ զարգացնելով համայնքահեն այլընտրանքային ծառայություններ, մասնավորապես՝ համայնքահեն փոքր խմբային տներ, պաշտպանված բնակարաններ, անձնական օգնականի ծառայություն, տնային խնամքի ծառայություններ: Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու, համայնքում ներառվելու իրավունքն իրացնելու համար ստեղծված այդ ծառայությունները պետք է հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր անձի՝ անկախ նրա առողջական խնդրի տեսակից, բնակության վայրից, սեռից և այլն: Այս ծառայությունները հնարավորություն կստեղծեն, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձինք, երեխաները, կանայք և աղջիկները հնարավորություն ունենան ակտիվ մասնակցություն ունենալ համայնքային կյանքին, ապրեն ընտանիքում կամ ընտանիքին մոտ միջավայրում, մասնակցեն մշակույթի, սոցիալական, քաղաքական և տնտեսական զարգացման առաջընթացին: Մարդու իրավունքների վրա հիմնված ծառայությունների ներդրումն ու զարգացումը, վերապատրաստված և արհեստավարժ մասնագետների միջոցով ծառայություններ մատուցելը ճկուն մեխանիզմներ կապահովեն հաշմանդամություն ունեցող

					անձանց անկախ կյանքի համար, նրանց կարողությունների հզորացման, այդ թվում ինքնուրույն որոշումներ կայացնելու համար: Նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է շահագրգիռ գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների միջև: Արդարադատության նախարարության կարծիքի հիման վրա (նախագծի ընդունման համապատասխան իրավական հիմքի բացակայություն) նախագծի հետագա շրջանառությունը դեռևս կասեցվել է:
2.	**Հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի, տրանսպորտային միջոցների, տեղեկատվության մատչելիության իրավունքի ապահովում**				
2.4.	Ծառայություն մատուցող մարմիններում տեսահաղորդակցման համակարգի ներդրմանն ուղղված ծրագրի մշակում, պիլոտ ծրագրի իրականացում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն.	Տարվա ընթացքում	Դոնոր կազմակերպություններ	Լսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ ստանալու նպատակով հաղորդակցման իրավունքի ապահովում Լսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց հաղորդակցման մատչելիության ապահովման նպատակով սույն միջոցառման շրջանակում նախատեսվում է հանրային ծառայություններ ստանալիս իրականացնել առցանց ժեստերի լեզվի թարգմանության փորձնական ծրագիր: Ծրագիրն իրականացնելու նպատակով նախարարությունում աշխատանքի է ընդունվել ժեստերի լեզվին տիրապետող մասնագետ, որը համապատասխան համակարգի առկայության դեպքում, տեսազանգի միջոցով պետք է ապահովի ժեստերի լեզվով համաժամակյա թարգմանություն ծառայութուն մատուցող մարմիններում:

					Սակայն ծրագիրը դոնոր կազմակերպությունների բացակայության պատճառով դեռևս ամբողջությամբ չի իրականացվում: Միաժամանակ, լսողության խնդիրներ ունեցող անձանց համար տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով՝ ԱՍՀՆ պաշտոնական www.mlsa.am կայք էջում տեղեկատվական հրապարակումներն ուղեկցվում են նաև հայերեն ժեստերի լեզվի թարգմանությամբ:
2.5.	Հաշմանդամություն ունեցող անձանց անձնական օգնականի ինստիտուտի ներդրման ծրագրի մշակում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	Դոնոր կազմակերպություններ	*Հաշմանդամություն ունեցող անձանց համայնքում ապրելու իրավունքը, նրանց սոցիալական ներառումը հասարակություն ապահովելուն ուղղված ծրագիր* Մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների փոխակերպման 2020-2024 թվականների միջոցառումների ծրագիրը», որի շրջանակներում նախատեսվում է ներդնել այլընտրանքային համայնքահենք ծառայություններ, մասնավորապես՝ համայնքահենք խմբային փոքր տներ, տնային խնամքի, անձնական օգնականի, սոցիալական օգնականի ծառայություններ: Այս ծառայությունները հնարավորություն կստեղծեն, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձինք, երեխաները, կանայք և աղջիկները ակտիվ մասնակցություն ունենան համայնքային կյանքին, ապրեն ընտանիքում կամ ընտանիքին մոտ միջավայրում, մասնակցեն մշակույթի, սոցիալական, քաղաքական և տնտեսական զարգացման առաջընթացին: Միաժամանակ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի /UNDP/

					կողմից մշակվել է «Սոցիալական օգնական և սոցիալական տաքսի» գործարար ծրագիրը: Ծրագրի շրջանակներում մշակվել է սոցիալական օգնականի ծառայության ներդրման գործիքակազմը, փորձնական ծրագրի պլանը: Սոցիալական օգնականի ծառայության նպատակն է ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համայնքում և ընտանիքում ապրելու իրավունքը, աջակցել նրանց կազմակերպելու խնամքը, իրենց տնային տնտեսության վարումը, այցելությունները բժշկի և այլ գործողություններ, որոնք անձը դժվարանում է կատարել:
4.	**Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի և զբաղվածության իրավունքի ապահովում**				
4.1.	Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /13,527.5 հազ. դրամ/	*Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում, 52 հաշմանդամություն ունեցող անձի մասնագիտական ուսուցման կազմակերպում* Ծրագրում ներգրավվել է հաշմանդամություն ունեցող 24 անձ:
4.2.	Աշխատաշուկայում	Աշխատանքի և	Տարվա	ՀՀ պետական	*Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության*

	անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում	սոցիալական հարցերի նախարարություն	ընթացքում	բյուջե /13,000.0 հազ. դրամ/	*խթանում, աջակցություն՝ 13 հաշմանդամություն ունեցող անձի փոքր ձեռնարկատիրական գործեունեությամբ զբաղվելու նպատակով* Ծրագրում ներգրավվել է հաշմանդամություն ունեցող 7 անձ:
4.3.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /14981.8-հազ. դրամ/ Ֆինանսավորումը կազմել է 14039.91 հազ. դրամ	*Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում՝ ծրագրում 30 շահառուի ընդգրկմամբ:* Ծրագրում ներգրավվել է հաշմանդամություն ունեցող 32 անձ:
4.4.	Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /16,474.2 հազ. դրամ/	*Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում, աջակցություն 41 հաշմանդամություն ունեցող անձի* Ծրագրում հաշմանդամություն ունեցող անձ չի ներգրավվել:

4.5.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /12,500.0 հազ. դրամ/ Ֆինանսավորումը կազմել է 1.787.7 հազ. դրամ:	Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում, 25 հաշմանդամություն ունեցող անձի աշխատատեղի հարմարեցում Ծրագրում ներգրավվել է հաշմանդամություն ունեցող 4 անձ:
5.	**Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման ծրագրեր**				
5.1.	Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (87,524.7 հազ. դրամ) Ֆինանսավորվել է 78,622.69 հազ.դրամ	*Մտավոր խնդիրներ ունեցող ամսական միջինը 130 հաշմանդամություն ունեցող անձի ցերեկային խնամքի սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրում* Միջոցառման շրջանակում ցերեկային խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ են տրամադրվում մտավոր և հոգեկան խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց: Ըստ գնահատված կարիքի շահառուները տարբեր խմբակներում ձեռք են բերում կարողություններին համապատասխան գիտելիքներ, արհեստագործական հմտություններ: Միջոցառման հիմնական նպատակը հաշմանդամություն ունեցող երիտասարդների ու պատանիների (հիմնականում մտավոր և հոգեկան խնդիրներ ունեցող) և նրանց ընտանիքների սոցիալական, կրթական և առողջապահական հիմնախնդիրների լուծման միջոցով նրանց ներառումն է հասարակություն: 2020 թվականին հայտարարված մրցույթների արդյունքում

					միջոցառումը պատվիրակվել են «Փրկություն», «Մայրի», «Առավոտ», «Աստղավարդ» հասարակական կազմակերպություններին: Համավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում ծառայությունների շարունակականությունն ապահովելու նպատակով ծառայություններն իրականացվել են հեռավար, օգտագործելով առցանց հարթակները, մասնավորապես՝ zoom, viber, facebook, messenger, quizzizz: Կենտրոններում ամսական կտրվածքով ծառայություններ են ստացել են 139 շահառու:
5.2.	Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (30,513.6 հազ. դրամ) Ֆինանսավորվել է 21,672.30 հազ.դրամ	*120 շահառուի սոցիալ հոգեբանական աջակցության ծրամադրում:* Միջոցառման շահառուներն են՝ հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև առողջական տարբեր խնդիրներ ունեցող, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները և երիտասարդները: Սոցիալական ներառման սկզբունքն ապահովելու համար, ցերեկային կենտրոններում ծառայություններ կարող են ստանալ նաև հաշմանդամություն կամ որևէ խնդիր չունեցող անձիք: Շահառուն դիտարկվում է բազմամասնագիտական թիմի կողմից, կատարվում է կարիքների նախնական գնահատում: Մասնագիտական թիմի կողմից կատարված գնահատման համաձայն՝ շահառուները հաճախում են տարբեր խմբակներ՝ ըստ մտավոր կարողությունների, ձեռք են բերում նաև որոշակի մասնագիտական հմտություններ: Միջոցառումը նպաստում է շահառուների ինքնասպասարկման, կենցաղավարման,

					հաղորդակցման, շփման և այլ կարողությունների զարգացմանը: 2020 թվականին հայտարարված մրցույթների արդյունքում միջոցառումը պատվիրակվել են «Երևան իմ սեր», «Լիարժեք կյանք», «Հույսի Մեծամոր» հասարակական կազմակերպություններին: Համավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում ծառայությունների շարունակականությունն ապահովելու նպատակով ծառայություններն իրականացվել են հեռավար, օգտագործելով առցանց հարթակները, մասնավորապես՝ zoom, viber, facebook, messenger, quizzizz: Միջոցառման շրջանակում սոցիալ-հոգեբանական (այդ թվում՝ կիրառական բնույթի գիտելիքների տրամադրման, անկախ և ինքնուրույն կյանք վարելու կարողությունների զարգացման միջոցով աջակցություն են ստացել ամսական 115 շահառու:
5.3.	Աուտիզմ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամ	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (70,416.0 հազ. դրամ) Ֆինանսավորվել է 64,812.23 հազ.դրամ	*Շուրջ 160 աուտիզմ ունեցող անձանց հնարավոր զբաղվածության և սոցիալական ներառման ապահովում* Միջոցառման շրջանակում ցերեկային կենտրոններում աուտիզմ ունեցող անձանց տրամադրվում են կրթության, հոգեբանական և սոցիալական աջակցություն, կիրառելով առաջատար երկրների կողմից ընդունված թերապիաներ և մեթոդաբանություն, տարիքին բնորոշ մոտեցմամբ և հատուկ ծրագրերով մասնագիտական ուսուցում, որոնք ուղղված են աուտիզմ ունեցող անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների կյանքի որակի բարելավմանը, կիրառական բնույթի գիտելիքների և մասնագիտության ձեռքբերմանը, ինքնուրույն

		բ)			կյանք վարելու կարողությունների զարգացմանը և հասարակության լիարժեք անդամ դառնալուն: 2020 թվականին հայտարարված մրցույթների արդյունքում միջոցառումը պատվիրակվել է «Աուտիզմ ազգային հիմնադրամ», «Հայկական կարիտաս», «Մանկական զարգացման հիմնադրամ» հասարակական կազմակերպություններին: Համավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում ծառայությունների շարունակականությունն ապահովելու նպատակով ծառայություններն իրականացվել են հեռավար, օգտագործելով առցանց հարթակները, մասնավորապես՝ zoom, viber, facebook, messenger, quizzizz: Միջոցառման շրջանակում ամսական ծառայություն են ստացել 167 աուտիզմ ունեցող անձ:
5.4.	Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպությունն (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե Սույն միջոցառման գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում	*Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող 3277 երեխայի և նրանց ընտանիքներին սոցիալ-հոգեբանական ծառայությունների մատուցում երեխաների խնամքի ցերեկային կենտրոններում:* 2020 թվականից նախարարությունն ընդլայնել է ցերեկային ծառայությունների ծածկույթը՝ հանրապետության 20 խոշոր բնակավայրերում ծառայություններ պատվիրակելով հասարակական կազմակերպություններին: Պատվիրակված հասարակական կազմակերպությունների կողմից նշված ծառայությունը միջինում տրամադրվել է 2700 երեխայի: Պայմանավորված ՔՈՎԻԴ 19 համավարակով՝ ծառայությունները արտակարգ դրության

					ժամանակահատվածում տրամադրվել են հեռավար եղանակով: Ծառայությունն ունի նաև շարժական բաղադրիչ՝ ուղղված սպասարկելու այն համայնքների երեխաներին, որտեղ ծառայությունը տեղակայված չէ, սակայն աջակցության կարիք կա:
5.5	Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում.	ՀՀ պետական բյուջե Սույն միջոցառման գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում	*Առանց ծնողական խնամքի մնացած 649 երեխայի, այդ թվում 450 հաշմանդամություն ունեցող երեխայի և անձանց շուրջօրյա խնամքի ապահովում:* Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) 5 հաստատությունում (մանկատուն) իրականացվում է առանց ծնողական խնամքի մնացած 577 երեխայի շուրջօրյա խնամքի, դաստիարակության ապահովումը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Մանկատներից երեքը հատուկ է՝ մասնագիտացված, որտեղ խնամվում է ծանր հաշմանդամություն ունեցող՝ կենտրոնական նյարդային համակարգի օրգանական և ֆունկցիոնալ ախտահարումներով, բնածին և ձեռքբերովի մտավոր և ֆիզիկական խնդիրներով շուրջ 450 երեխա:
5.6.	Երեխաաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե Սույն միջոցառման գծով	*Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող 600 երեխային ցերեկային խնամքի ծառայությունների մատուցում և նրանց ընտանիքներին սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում:* Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին

				նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում	ցերեկային խնամքի ծառայություն տրամադրող 6 պետական հաստատությունների կողմից ծառայություն է մատուցվել 2-18 տարեկան 600 երեխայի: Կենտրոնները ծառայություն են տրամադրել ոչ միայն երեխաներին, այլ նաև ընտանիքներին՝ ապահովելով սոցիալ-հոգեբանական օգնության, իրավական խորհրդատվության, ուսումնադաստիարակչական ծառայությունների, մասնագիտական կողմնորոշման, արվեստի միջոցով թերապիայի, օկուպացիոն թերապիայի (վերականգնողական վարժանքներով թերապիա) տրամադրումը, առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրման, ժամանցի, ինչպես նաև սոցիալական ներառմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումների կազմակերպումը: Նշված բոլոր ծառայությունների նպատակն է երեխային և նրա ընտանիքին աջակցելը՝ ապահովելով երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքը: Քովիդ 19-ի պայմաններում, երբ նշված հաստատությունները ծառայությունները տրամադրվել են հեռավար եղանակով՝ բոլոր շահառու երեխաների ընտանիքներին երկշաբաթյա կտրվածքով տրամադրվել է սննդի զամբյուղ:
5.7.	Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ /հաշմանդամություն	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (2,793,054.70 հազ. դրամ) Ֆինանսավորվել է 2,582,742.11	*1180 հաշմանդամություն ունեցող անձի շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման կազմակերպում* Սույն միջոցառման շրջանակում շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ են տրամադրվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, խնամքի կարիք ունեցող 65 տարին լրացած տարեցներին և հաշմանդամություն

	ունեցող անձինք կազմում են տուն ինտերնատներում խնամվողների շուրջ 70 %/			հազ.դրամ	ունեցող 18 տարին լրացած, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց: Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ են մատուցում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող բնակչության սոցիալական պաշտպանության հինգ՝ Երևանի N1, Նորքի, Գյումրու ընդհանուր տիպի տուն-ինտերնատները, Վարդենիսի նյարդահոգեբանական հատուկ (մասնագիտացված) տուն-ինտերնատը և «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնը: Տուն-ինտերնատներում փաստացի խնամվել են 1113 անձ, որից շուրջ 850-ը հաշմանդամություն ունեցող են: Խնամվողները գտնվում են պետության լրիվ խնամքի ներքո, նրանք ապահովվում են կացարանով, խնամքով, օրը առնվազն երեքանգամյա սննդով, հագուստով, կենսապահովման անհրաժեշտ միջոցներով, ստանում են սոցիալ-հոգեբանական, խորհրդատվական և վերականգնողական օգնություն, կազմակերպվում են նաև մշակութային միջոցառումներ:
5.8.	Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (232,601.30 հազ. դրամ)	*Շուրջ 3260 անձի սոցիալական սպասարկման կազմակերպում տնային պայմաններում* */հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 30%-ը/* Տնային պայմաններում խնամքի ծառայությունները տրամադրվում են դրա կարիքն ունեցող, տարեց, անձանց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ՝ նրանց

				Ֆինանսավորվել է 206,248.48 հազ.դրամ	անհատական սոցիալական ծրագրի համաձայն և ըստ նրանց գնահատված կարիքների սահմանված խմբերի ու ծառայությունների տեսակների նկատմամբ ունեցած պահանջարկի: Տնային պայմաններում շահառուներին տրամադրվում են հետևյալ ծառայությունները. 1) կենցաղային սպասարկում. 2) բժշկական օգնություն և սպասարկում. 3) սոցիալ-հոգեբանական օգնություն. 4) խորհրդատվական օգնություն: Սույն միջոցառման շրջանակում իրականացվում է 3032 անձի սոցիալական սպասարկման կազմակերպում տնային պայմաններում (հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 30%-ը): Միջոցառումն իրականացնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ինչպես նաև 2020 թվականին դրամաշնորհի մրցույթում հաղթած հետևյալ կազմակերպությունները՝ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ, «Գերմանական Կարմիր Խաչի ընկերություն», «Հայկական Կարմիր Խաչի ընկերություն», «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ, «Հանս Քրիստիան Կոֆոեդ» ԲԿ, «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ:

5.9.	Տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (205, 402.50 հազ. դրամ) Ֆինանսավորվել է 184,683.80 հազ.դրամ	1845 անձի սոցիալական սպասարկում ցերեկային կենտրոններում /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 35%-ը/ «Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» ծրագրի հիմնական նպատակն է խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում սպասարկմամբ և օրը՝ մեկանգամյա սննդով կամ տաք ճաշով ապահովմամբ: Ցերեկային կենտրոններում, ցերեկվա ժամերին տրամադրվում է առաջին բուժօգնության և սոցիալ-հոգեբանական խորհրդատվության ծառայություններ: Սույն միջոցառման շրջանակում իրականացվում է 1408 անձի սոցիալական սպասարկում ցերեկային կենտրոններում /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 35%-ը/ 2020 թվականին հայտարարված մրցույթների արդյունքում միջոցառումը պատվիրակվել է «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ին, «Հայակական Կարիտաս» ԲՀԿ-ին, «Խնամք» ՀԿ-ին և «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ-ին:

5.10	Մտավոր խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (44,938.8 հազ.դրամ)	*30 հաշմանդամություն ունեցող անձի շուրջօրյա խնամքի տրամադրում* Միջոցառման շրջանակում շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ են տրամադրվել մտավոր խնդիրներ ունեցող երկկողմանի ծնողազուրկ 18 տարին լրացած, կացարանի և խնամքի կարիք ունեցող 30 երիտասարդի: 2020 թվականին հայտարարված մրցույթների արդյունքում միջոցառումը պատվիրակվել է «Ջերմիկ Անկյուն» հիմնադրամին:
5.11.	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (32,860.8 հազ.դրամ)	*32 հաշմանդամություն ունեցող անձի շուրջօրյա խնամքի տրամադրում* Միջոցառման շրջանակում շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ են տրամադրվել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ունեցող 16 անձի: 2020 թվականին հայտարարված մրցույթի արդյունքում միջոցառումը պատվիրակվել է «Խնամք» ՀԿ-ին ՝ Սպիտակի խնամքի տանը 16 շահառուի ծառայություններ տրամադրելու նպատակով: Խնամքի տանը բազմամասնագիտական թիմի կողմից մատուցվում են հետևյալ ծառայությունները՝ սոցիալ-հոգեբանական ծառայություններ, ինքնասպասարկման ունակությունների զարգացում և կենցաղավարման հմտությունների ուսուցանում, սոցիալականացման գործընթացի և համայնքային կյանքին մասնակցության ապահովում, աշխատանքային թերապիայի տարբեր տեսակների

					(զբաղմունքների) կազմակերպում, մշակութային միջոցառումների կազմակերպում և այլն: Վերոնշյալ ծառայությունների նպատակն է խնամքի տան շահառուներին ընձեռել ինքնուրույն, լիարժեք կյանքի, հասարակության մեջ ինտեգրման և լիարժեք անդամ ներկայանալու հնարավորություն:
5.12.	Տնային խնամք հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մրցույթով ընտրված կազմակերպություն (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (14448.3 Ֆինանսավորվել է 11.731.2 հազ.դրամ	*50 հոգեկան առողջության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձի սպասարկում տնային պայմաններում* Սույն միջոցառման հիմնական նպատակն է խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց տնային պայմաններում խնամքով ու սպասարկմամբ ապահովումը: Դրամաշնորհը տրամադրվել է 2020 թ.մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «Խնամք» ՀԿ-ին Երևան քաղաքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 50 շահառուի տնային պայմաններում խնամքի ծառայությունների տրամադրման նպատակով: Սույն միջոցառման շրջանակում ծառայություն են ստացել 53 հոգեկան առողջության խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձ:
7.	**Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական ծառայություններից օգտվելու իրավունքի ապահովում**				
7.1.	Պետական հավաստագրերով աջակցող միջոցների տրամադրում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (952,823.1 հազ. դրամ)	*Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջ 13822 աջակցող միջոցների տրամադրում* Տարվա ընթացքում շահառուներին սահմանված կարգով և ժամկետներում տրամադրվել են պետական հավաստագրեր

				Ֆինանսավորվել է 915,890.44 հազ.դրամ	աջակցող միջոցներ ձեռքնբերելու նպատակով: Նախարարության կողմից որակավորված շուրջ 16 կազմակերպությունների կողմից տրամադրվել են 12518 աջակցող միջոցներ: Ներդրված մեխանիզմները թույլ են տալիս ապահովել պետական միջոցներով տրամադրվող աջակցող միջոցների ողջ պահանջարկը, այսինքն՝ աջակցող միջոցներ ստանալու մասին բոլոր դիմումները բավարարվում են օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:
7.2.	Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (12,362.3 հազ. դրամ) Ֆինանսավորվել է 11,561.60հազ.դրամ	*Տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) 30 անձի սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու հմտությունների ուսուցանում* Ծրագրի շրջանակում իրականացվում է տեսողության խնդրով հաշմանդամություն ունեցող անձանց սպիտակ ձեռնափայտով տեղաշարժվելու հմտությունների ուսուցանում, տարածական կողմնորոշման ուսուցում, աջակցություն՝ հաղթահարելու սոցիալ-հոգեբանական բնույթի խոչընդոտները: Հայտարարված մրցույթի արդյունքում միջոցառումը պատվիրակվել է «Լիարժեք կյանք» ՀԿ, որի միջոցով ամսական կտրվածքով ծառայություն են ստացել տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող 22 անձ:
10.	**Սոցիալական գործընկերություն հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների միջև**				
10.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային	Աշխատանքի և սոցիալական հարցերի	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	*Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների քննարկում պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ*

	հանձնաժողովի աշխատանքերի իրականացում	նախարարություն Մարզպետարաններ (համաձայնությամբ)			2020 թվականի հունիսի 9-ին գումարվել է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նիստ՝ շահագրգիռ գերատեսչությունների և հաշանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Նիստը կազմակերպվել է առցանց: Օրակարգում քննարկվել են հետևյալ հարցերը. • Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցող՝ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ դրամաշնորհի պայմանագրեր կնքած կազմակերպությունների աշխատանքները COVID -19-ի պայմաններում» • «Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների փոխակերպման 2020-2024 թվականների միջոցառումների ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը:
11.	**Վիճակագրություն և տվյալների հավաքագրում**				
11.1.	Հայաստանում անցկացվող մարդահամարի հարցաթերթում անձի հաշմանդամության և մասնակցության սահմանափակման վերաբերյալ հարցերի ներառում	Վիճակագրական կոմիտե Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում Շարունակական	Ֆինանսավորում չի պահանջում	*Բնակչության մեջ տարբեր խնդիրներ ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալների առկայություն* Հայաստանի Հանրապետության 2021 թվականի մարդահամարի ծրագրի հարցաշարի) նախագծում՝ ըստ ՄԱԿ կողմից սահմանված պահանջների ներառվել են անձի հաշմանդամության և մասնակցության սահմանափակման վերաբերյալ հարցեր՝ ըստ Վաշինգտոնի խմբի /WG/ գործունակությունների կրճատ փաթեթի: Արդյունքում ակնկալվում է վիճակագրական տվյալներ ստանալ բնակչության շրջանում՝ տեսողության, լսողության, քայլելու կամ

					բարձրանալու, հիշողության, հաղորդակցվելու և ինքնուրույն խնամքը հոգալու խնդիրներ ունեցող անձանց վերաբերյալ, որոնք հնարավոր կլինի խաչաձևել՝ սեռի, տարիքի, կրթական մակարդակի, ամուսնական վիճակի, ազգության, զբաղվածության և մարդահամարի ընթացքում հավաքագրվող այլ տվյալների հետ:
12.	**Իրազեկվածության բարձրացում**				
12.2.	Սոցիալական ծառայության տարածքային մարմինների սոցիալական աշխատողների վերապատրաստումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, նրանց մատուցվող ծառայությունների վերաբերյալ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նարարաություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե, սույն միջոցառման գծով նախատեսված ընդհանուր հատկացումների շրջանակում Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	*Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, նրանց մատուցվող ծառայությունների վերաբերյալ իրազեկման բարձրացում, համապատասխան ծառայությունների մատուցում* Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2020 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ դասընթացները. • «Սոցիալական աշխատանք տարեցների հետ» թեմայով դասընթաց, որտեղ ներառվել են «Տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունն ու դրա իրականացման 2017-2021թթ. միջոցառումների ծրագիրը» և «Ոլորտը կարգավորող օրենսդրությունը և տարեցներին ու հաշմանդամներին տրամադրվող ծառայությունները» թեմաները: Դասընթացին մասնակցել են աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի տուն-ինտերնատների և ՀԿ–ների 24 սոցիալական աշխատողներ և հոգեբաններ: • Տարեցների խնամքի առանձնահատկությունները» թեմայով դասընթաց, որտեղ ներառվել են «Տարեց կամ

					հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի, վերականգնողական օգնության տրամադրման կարգն ու պայմանները» և «Հայաստանում տարեցների և հաշմանդամների սոցիալական պաշտպանության ոլորտի օրենսդրությունը, տարեցներին և հաշմանդամներին տրամադրվող ծառայությունները» թեմաները: Դասընթացին մասնակցել են աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի տուն-ինտերնատների 22 բուժքույրեր և սանիտարներ: • «Մարդու իրավունքների արդի հիմնախնդիրները» թեմայով դասընթաց, որին մասնակցել են աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների սոցիալական աշխատողներ և իրավախորհրդատուներ՝ 22 ունկնդիր: • «Խոշտանգումները, անմարդկային կամ անձի արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը՝ որպես մարդու իրավունքների ոտնահարում» թեմայով դասընթաց, որին մասնակցել են աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տնօրեններ, փոխտնօրեններ, սոցիալական աշխատողներ, սոցիալական մանկավարժներ, մեթոդիստ համակարգողներ, հոգեբաններ և ՀԿ ներկայացուցիչներ՝ 28 ունկնդիր:
12.3.	Գործատուների շրջանում հաշմանդամություն ունեցող կանանց հիմնախնդիրների վերաբերյալ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե, սույն միջոցառման գծով նախատեսված ընդհանուր	*Հաշմանդամություն ունեցող կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանություն, գործատուների շրջանում նրանց նկատմամբ կարծրատիպերի վերացում* Համավարակով և ռազմական դրության հետևանքով երկրում ստեղծված իրավիճակով պայմանավորված

	իրազեկման աշխատանքների իրականացում			հատկացումների շրջանակում Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	իրազեկման աշխատանքներ չեն իրականացվել:
12.4.	Հաշմանդամություն ունեցող անձանց այդ թվում՝ կանանց, երեխաների, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ ուղեցույցների մշակում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	*Հաշմանդամություն ունեցող կանանց, երեխաների, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց վերաբերյալ իրազեկվածության բարձրացում* Համավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում հաշմանդամություն ունեցող (այդ թվում հոգեկան և մտավոր խնդիրներ ունեցող) անձանց իրազեկվածությունը ապահովելու նպատակով մշակվել է կոռոնավիրոուսային վարակի վերաբերյալ տեղեկատվական հոլովակ-ուղեցույց, որը տեղադրվել է նախարարության պաշտոնական կայք էջում: Հարկ է նշել նաև, որ նախարարության պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվական տեսահոլովակները ուղեկցվում են նաև հայերեն ժեստերի լեզվի թարգմանությամբ:
12.5.	Լավագույն քարոզարշավի, հանրային իրազեկության, լրատվության մրցանակաբաշխություն	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն.	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ	*ՁԼՄ-ների շրջանում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և նրանց հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացման նախաձեռնությունների խթանում* Համավարակով և ռազմական դրության հետևանքով երկրում ստեղծված իրավիճակով պայմանավորված՝

					մրցանակաբաշխություն չի իրականացվել: